

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

Երևան

“-----” -----201-

_____, այսուհետ՝ Դրամաշնորհառու, ի դեմս _____, գործում է՝ հիմնվելով իր կանոնադրության վրա, մի կողմից, «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը, այսուհետ՝ Իրականացնող գործակալություն (ԻԳ), ի դեմս գործադիր տնօրեն _____ գործում է՝ հիմնվելով Հիմնադրամի կանոնադրության վրա, մյուս կողմից, ՀՀ ֆինանսների նախարարության Ծրագրերի իրականացման վարչությունը, այսուհետ՝ ԾԻՎ, ի դեմս վարչության պետ _____, երրորդ կողմից (Դրամաշնորհառուն, ԻԳ-ն և ԾԻՎ-ը, միասին այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն Դրամաշնորհային պայմանագիրը, առաջնորդվելով «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքների» (ԱԽՈՆ/TPQI) ծրագրի «Արտահանողի զարգացման դրամաշնորհների» իրականացման ուղեցույցի իրավական դրույթներով (այսուհետ՝ Ուղեցույց), հետևյալի վերաբերյալ.

Բաժին 1. Պայմանագրի առարկան

1.1. Համաձայն այս Դրամաշնորհային պայմանագրի՝ ԻԳ-ն անցկացրել է մրցույթ, որի վերջնաժամկետն էր _____, որին մասնակցել է Դրամաշնորհառուն և ընտրվել է դրամաշնորհի ֆինանսավորման համար Ուղեցույցի 2-րդ, 4-րդ և 5-րդ հավելվածներով նախատեսված ձևաչափերով՝ ներկայացված ծրագրային առաջարկը իրականացնելու համար (այսուհետ՝ Ծրագիր) (Հավելված 1): ԻԳ-ն իրականացնում է դրամաշնորհի տրամադրումը և իրականացնում է Ծրագրի դիտանցում: ԾԻՎ-ը հաստատում է ֆինանսական հաշվետվությունները և իրականացնում է Դրամաշնորհի վճարումները, և Դրամաշնորհառուն պարտավորվում է համաֆինանսավորել և իրականացնել իր գործունեությունը՝ համաձայն Ուղեցույցի և Հավելված 1-ի պայմանների:

Բաժին 2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Դրամաշնորհառուն պարտավոր է՝

2.1.1. Օգտագործել դրամաշնորհը բացառապես Ծրագրի և Ուղեցույցի դրույթների համաձայն և

2.1.2. Իրականացնել Ծրագիրը բարձր պատասխանատվությամբ և արդյունավետությամբ՝ Համաշխարհային բանկի համար տեխնիկական, տնտեսական, ֆինանսական, կառավարչական, բնապահպանական, առողջապահական և սոցիալական ստանդարտներին և գործելակերպին համաձայն՝ Համաշխարհային բանկի համար ընդունելի և Համաշխարհային բանկի հակակոռուպցիոն ուղեցույցի դրույթներին համաձայն.

Տե՛ս՝ <http://siteresources.worldbank.org/INTLAWJUSTICE/Resources/AnticorruptionGuidelinesOct2006RevisedJan2011.pdf>

2.1.3. Ապահովել համաֆինանսավորում և.

2.1.4. Ծրագրի համար բացել առանձին բանկային հաշիվ (այսուհետ՝ Առանձնացված բանկային հաշիվ), որը կիրառվում է բացառապես Ծրագրի իրականացման նպատակների համար, և որի վրա պետք է փոխանցվեն Դրամաշնորհառուի և ԾԻՎ-ի կողմից վճարվող Դրամաշնորհային գումարները, և որից պետք է կատարվեն նախատեսված բոլոր ծախսերը:

2.1.5. Ունենա պատշաճ ֆինանսական կառավարման համակարգ և պատրաստի ֆինանսական հաշվետվություններ՝ Բանկի համար ընդունելի հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան: Դրամաշնորհառուի ֆինանսական կառավարման համակարգը պետք է իրականացնի Ծրագրի ծախսերի առանձնացված հաշվառում: Հաշվառումը պետք է ներառի Ծրագրի եկամուտների և ծախսերի ճշգրիտ և ամբողջական գրանցում, որոնք պետք է ապահովված լինեն համապատասխան փաստաթղթերով (հաշիվ սպրանքագրեր, մատակարարների ընտրության հիմնավորումներ և այլն)՝ հիմնավորելով Ծրագրի շրջանակներում կատարված բոլոր ծախսերը, ինչպես նաև Համաշխարհային Բանկի կամ ՀՀ կառավարության պահանջով ապահովել ֆինանսական հաշվետվությունների աուդիտ՝ ՀԲ-ի կողմից ընդունելի անկախ աուդիտորների կողմից:

2.1.6. ԻԳ-ին ներկայացնել Պայմանագրի 3.4 և 3.5 կետերում նշված փաստաթղթերը՝ այդ կետերով նախատեսված կարգով և ժամկետում:

2.1.7. ԻԳ-ին ներկայացնել Ծրագրի իրականացման վերջնական հաշվետվությունները Ծրագրի ավարտից 30 աշխատանքային օրվա ընթացքում և ԾԻՎ-ին վերադարձնել չծախսված ֆինանսական միջոցները:

2.1.8. Ծրագրի իրականացման սկզբնական շրջանում, ինչպես նկարագրված է Ուղեցույցի 7.2 կետում, ստեղծել և պահպանել Ծրագրի «թղթապանակ» Ծրագրի ավարտից հետո առնվազն 3 տարի :

2.2. Դրամաշնորհառուն իրավունք ունի՝

2.2.1. Դրամաշնորհային միջոցների հատկացման համար ներկայացնել հայտ պահանջագիր Համաձայն Պայմանագրի 3.4 կետի:

2.2.2. Իր հայեցողությամբ կատարել լրացուցիչ մասհանումներ, ներդրումներ, ներգրավել լրացուցիչ միջոցներ երրորդ անձանց կողմից, դրամական կամ ոչ դրամական եղանակով, կապիտալի ֆինանսավորման կամ պարտատոմսերի թողարկման եղանակով (ի լրումն իր կողմից տրամադրվող համաֆինանսավորման ռեսուրսների. 2.1.3.Բաժին)՝ աջակցելով Ծրագրի իրականացմանը, առանց սույն Պայմանագրով նախատեսված այլ պարտավորություններ առաջացնելու:

2.3. ԾԻՎ-ը պարտավոր է՝

2.3.1. Ստուգել Դրամաշնորհառուի կողմից տրամադրված և ԻԳ-ի կողմից ստուգված ֆինանսական հաշվետվությունների ճշգրտությունը (և ծախսերը հիմնավորող փաստաթղթերը),

2.3.2. Պահանջել ԻԳ-ից ծանուցագիր՝ ԻԳ-ի կողմից Դրամաշնորհառուի հաշվետվությունների ստուգման վերաբերյալ (որին կցվում են հաշվետվությունները և ծախսերը հիմնավորող փաստաթղթերի պատճենները),

2.3.3. Հատկացնել Դրամաշնորհի միջոցները՝ համաձայն Պայմանագրի 3-րդ բաժնի,

2.3.4. Պահանջել հավելյալ փաստաթղթեր և պարզաբանումներ ֆինանսական հաշվետվություններում և օժանդակ փաստաթղթերում անհամապատասխանություններ նկատելու դեպքում:

2.4. ԻԳ-ն պարտավոր է՝

2.4.1. Պարբերաբար ստանալ և ստուգել ընթացիկ նկարագրողական և ֆինանսական հաշվետվությունները:

2.4.2. ԾԻՎ-ին ներկայացնել Հաշվետվությունները ստուգելու մասին ծանուցումը հաշվետվությունների և բոլոր օժանդակող փաստաթղթերի պատճենների հետ միասին՝ համաձայն Պայմանագրի 3.5 կետի.

2.4.3. Պահանջել պարզաբանումներ ու հավելյալ փաստաթղթեր՝ հաշվետվություններում և օժանդակող փաստաթղթերում հայտարարված ցանկացած անհամապատասխանության վերաբերյալ:

2.4.4. Եթե ԻԳ-ն կհամարի անհրաժեշտ և պատշաճ, Դրամաշնորհառուին տրամադրել բիզնեսի զարգացման աջակցություն.

2.4.5. Իրականացնել Ծրագրի առաջընթացի մոնիտորինգ՝ համաձայն Ուղեցույցի 10-րդ հոդվածի:

2.5. ԻԳ-ն իրավունք ունի՝

2.5.1. Դրամաշնորհառուից պահանջել Պայմանագրի 3.4 և 3.5 կետերում նշված փաստաթղթերը՝ այդ կետերով նախատեսված կարգով և ժամկետում.

2.5.2. Իրականացնել այցելություններ և տեղում ուսումնասիրել կատարված ծախսերի իսկությունը, ինչպես նաև ստուգել «թղթապանակը» և Դրամաշնորհառուի Ծրագրի հետ կապված հաշվապահական հաշվառումը.

2.5.3. Դադարեցնել պայմանագիրը կամ կիրառել այլ տույժեր կամ միջոցառումներ՝ համաձայն Պայմանագրի 6, 7 և 9 Բաժինների:

2.6. ԾԻՎ-ն իրավունք ունի՝

2.6.1. Չհատկացնել Դրամաշնորհային միջոցներ, եթե Դրամաշնորհառուն չի տրամադրում պահանջվող փաստաթղթերը կամ պարզաբանումները ֆինանսական հաշվետվություններում կամ օժանդակ փաստաթղթերում անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում:

Բաժին 3. Դրամաշնորհի տրամադրման ընթացակարգը

3.1. Դրամաշնորհը կազմում է առավելագույնը [_____ ՀՀ դրամ]՝ համաձայն Հավելված 1-ով հաստատված բյուջեի, որը տրամադրվում է Պայմանագրի 3.2 կետով սահմանված կարգով և հատկացումներով:

3.2 ԱԶԴ-ի դրամաշնորհային միջոցների տրամադրումը կկատարվի 12 ամսվա ընթացքում հետևյալ չորս հատկացումներով.

- 1-ին հատկացում. դրամաշնորհի միջոցների 20%-ը՝ պայմանագրի ստորագրման հիման վրա, 10 (10) բանկային օրվա ընթացքում և բանկային երաշխիք ներկայացնելու պարագայում (որը ուժի մեջ կլինի Ծրագրի ողջ ժամանակահատվածի ընթացքում),
- 2-րդ հատկացում. դրամաշնորհի միջոցների 30%-ը՝ 1-ին հատկացման 80%-ը ծախսելուց հետո և առնվազն 40% համաֆինանսավորման պարագայում,
- 3-րդ հատկացում. դրամաշնորհի միջոցների 40%-ը՝ նախորդ հատկացումների 80%-ը ծախսելուց հետո և առնվազն 50% համաֆինանսավորման պարագայում,
- Մնացորդի վճարում. վերջնական ընթացիկ և ֆինանսական հաշվետվությունների հաստատումից հետո մնացորդի վճարումը կհաշվարկվի փաստացի հաստատված ծախսերի հիման վրա, և հիմնվելով հաստատված ավարտական նկարագրողական ու ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.3. Դրամաշնորհային միջոցները պետք է փոխանցվեն Դրամաշնորհառուի Առանձնացված բանկային հաշվին՝ Դրամաշնորհառուի կողմից Պայմանագրի 3.4 կետում նշված փաստաթղթերը Դրամաշնորհների իրականացման ուղեցույցի դրույթներին համապատասխանության և ԾԻՎ-ի կողմից հաստատման դեպքում:

3.4. Հետագա հատկացումների համար Դրամաշնորհառուն պետք է ներկայացնի վճարման պահանջագիր՝ Ուղեցույցի 6-րդ հավելվածում տրված ձևանմուշով, որը ուղեկցվում է միջանկյալ/վերջնական նկարագրողական և ֆինանսական հաշվետվություններով, ծախսերի մանրամասն ցուցակով և ծախսերը հիմնավորող փաստաթղթերով՝ համաձայն 7-րդ, 8-րդ և 9-րդ Հավելվածներում ներկայացված ձևանմուշների:

3.5. Պայմանագրի 3.4-րդ կետում նշված փաստաթղթերը և հաշվետվությունները, ինչպես նաև մոնիտորինգի հիման վրա կազմված հաշվետվությունները (ըստ Ուղեցույցի) ստանալուց հետո, ԻԳ-ն 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում (այսուհետ՝ Ստուգման ժամանակաշրջան) ստուգում է Հաշվետվությունների համապատասխանությունը Պայմանագրին և Ուղեցույցի պայմաններին: Դրամաշնորհառուի փաստաթղթերում անհամապատասխանության հայտնաբերման դեպքում ստուգման ժամանակաշրջանը կասեցվում է, և Դրամաշնորհառուն գրավոր կերպով տեղեկացվում է կասեցման մասին (ներառյալ հաղորդակցությունը էլեկտրոնային փոստով): Ստուգման ժամանակաշրջանը վերսկսվում է բացակայող փաստաթղթեր/տեղեկությունները ներկայացնելուց հետո և/կամ անհամապատասխանությունը շտկվում է: Վերջնական վճարման դեպքում ստուգման ժամանակաշրջանը տևում է 30 աշխատանքային օր: Ծրագրի հետ կապված բոլոր ծախսերը պետք է վճարվեն մինչև Դրամաշնորհային պայմանագրի ավարտը: Ցանկացած ծախս, որը կկատարվի դրանից հետո, կդիտարկվի որպես ոչ իրավասու ծախս:

3.6. Եթե ԻԳ-ն հաստատում է Պայմանագրի 3.4-րդ կետում նշված փաստաթղթերը, այն համապատասխան ծանուցում է ներկայացնում ԾԻՎ-ին (յուրաքանչյուր փաստաթղթի մեկ պատճենի հետ միասին)՝ Պայմանագրի Ստուգման ժամանակաշրջանի ավարտից հետո երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում:

3.7. Պայմանագրի 3.6-րդ կետում նշված ծանուցումը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում ԾԻՎ-ը ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը և հաստատման դեպքում երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է Դրամաշնորհի միջոցների համապատասխան գումարի հատկացում: Անհամապատասխանության դեպքում՝ ԾԻՎ-ը փաստաթղթերի փաթեթը վերադարձնում է ԻԳ-ին (յուրաքանչյուր փաստաթղթի մեկ պատճենի հետ միասին): Այս դեպքում Պայմանագրի 3.5-րդ և 3.6-րդ կետերում նշված պայմանները վերսկսվում են նույն կետերով սահմանված կարգով:

3.8 Եթե Ծրագրի ավարտին Դրամաշնորհառուի կողմից կատարված փաստացի իրավասու ծախսերը պակաս են, քան Դրամաշնորհային պայմանագրում նշված թույլատրելի ծախսերը, ապա դրամաշնորհը սահմանափակվում է ԻԳ-ի կողմից հաստատված Ծրագրի փաստացի իրավասու ծախսերի 70%-ով: Եթե վճարված գումարները գերազանցում են վերջնական հաստատված փաստացի ծախսերը, ապա ենթակա են վերադարձման նման պարտավորության վերաբերյալ ԻԳ-ի կողմից գրություն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:

Բաժին 4. Տեղեկատվության գաղտնիություն

4.1. Պայմանագրի յուրաքանչյուր կողմ համաձայնում է չբացահայտել մյուս կողմ(եր)ից ստացված տեղեկությունները, և ՀՀ օրենսդրությամբ այն համարվում է գաղտնի՝ ստանալուց հետո 3 տարվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան տեղեկատվության տրամադրումը պահանջվում է ՀՀ օրենսդրությամբ:

4.2. Պայմանագրային դրույթների խախտման՝ գաղտնի տեղեկատվության բացահայտման դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բաժին 5. Մտավոր սեփականության իրավունքներ

5.1. Սույն Պայմանագրի շրջանակներում իրականացվող Ծրագրերի ներքո Դրամաշնորհառուների կողմից մշակված մտավոր սեփականության իրավունքը պատկանում է Դրամաշնորհառուին:

Բաժին 6. Պայմանագրի դադարեցում

6.1. ԻԳ-ն կարող է դադարեցնել Պայմանագիրը և իրավունք ունի պահանջել Դրամաշնորհառուից ամբողջությամբ կամ մասամբ հետ վճարել Դրամաշնորհառուին վճարված Դրամաշնորհային գումարը՝ մինչև Պայմանագրի ավարտը հետևյալ դեպքերում (բացառությամբ 9-րդ բաժնում նկարագրված դեպքերի)՝

6.1.1 Դրամաշնորհառուն չի կատարում Պայմանագրի և (կամ) Ուղեցույցի դրույթները:

6.1.2 Դրամաշնորհառուն ունի զգալի անհամապատասխանություններ և հետաձգումներ ծրագրի իրականացման ժամանակացույցում:

6.1.3 Դրամաշնորհառուն ձախողում է կամ չի ցանկանում ներկայացնել անհրաժեշտ հաշվետվությունները:

6.1.4 Դրամաշնորհառուն ձախողում է կամ չի ցանկանում ներկայացնել ֆինանսական փաստաթղթերի պատճենները՝ ֆինանսական հաշվետվությունը հաստատելու համար:

6.1.5 Դրամաշնորհառուի կողմից պատշաճ հաշվապահական հաշվառում չի իրականացվում:

6.1.6 Շահառուն ձախողում է ապահովել Ծրագրի համաֆինանսավորման մասնաբաժինը:

6.1.7 Պայմանագրի կատարման ընթացքում Դրամաշնորհառուն ներգրավվում է այնպիսի գործողություններում, որոնք, ըստ ԻԳ-ի վճռի, եղել են կամ կհանգեցնեն շահերի բախման:

6.1.8 Դրամաշնորհը զբաղվել է կոռուպցիոն, խարդախ, գաղտնի, հարկադրանքի կամ խոչընդոտող գործողություններով (ինչպես սահմանված է Համաշխարհային բանկի պատժամիջոցների գործընթացներում):

<http://siteresources.worldbank.org/INTLAWJUSTICE/Resources/AnticorruptionGuidelinesOct2006RevisedJan2011.pdf>) Պայմանագրի համար մրցակցության կամ Պայմանագրի իրականացման ժամանակ:

6.2. Դրամաշնորհառուն կարող է դադարեցնել Պայմանագիրը՝ մինչև Պայմանագրի ժամկետի ավարտը և պարտավորվում է ամբողջությամբ կամ մասամբ հետ վճարել Դրամաշնորհառուին վճարված Դրամաշնորհային գումարը (բացառությամբ 9-րդ բաժնում նկարագրված դեպքերի):

6.3. Անկախ պայմանագրի դադարեցման հիմքերից, Պայմանագրի 4-րդ և 5-րդ Բաժիններն ուժի մեջ են մնում Պայմանագրի դադարեցումից հետո:

Բաժին 7. Ակտիվների սեփականության իրավունք

Դրամաշնորհային միջոցներով ձեռք բերված բոլոր ակտիվները (ապրանքներ, ծառայություններ և գործառնությունների արդյունքներ, նյութական և ոչ նյութական ակտիվներ) շարունակում են մնալ ԻԳ-ի սեփականությունը՝ մինչև Ծրագրի հաջող ավարտը: Եթե կանոնավոր մոնիտորինգային այցերի ընթացքում պարզվում է, որ Դրամաշնորհառուի կողմից ձեռք բերված ակտիվները գոյություն չունեն կամ չարաշահվում

են, ապա ԻԳ-ին իրեն իրավունք է վերապահում կասեցնել Ծրագրի իրականացումը և կիրառել սույն Պայմանագրի 6-րդ Բաժնում նշված միջոցառումները:

Դրամաշնորհառուն պատասխանատու է ամբողջ գույքի և սարքավորումների պատշաճ շահագործման և պահպանման համար: Անհրաժեշտության դեպքում, ԻԳ-ն կարող է պահանջել Դրամաշնորհառուից սպասարկել այս գույքի ապահովագրությունը թալանից, գողություններից, հրդեհից և այլնից:

Ծրագրի իրականացման ժամանակահատվածում Դրամաշնորհառու կազմակերպության փակման կամ լուծարման դեպքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, մինչև այդ քաղ ԾԻՎ-ի կողմից կատարված բոլոր վճարումները պետք է վերադարձվեն:

Բաժին 8. Կողմերի պարտավորությունները

8.1. Եթե Դրամաշնորհառուն չկատարի Պայմանագրով սահմանված պարտականությունները կամ դրանք պատշաճ կերպով չկատարի (պայմանագրի խախտում), ԻԳ-ն իրավունք ունի հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ Դրամաշնորհառուին վճարված ընդհանուր դրամաշնորհի գումարի 0.5% -ի չափով տուգանք կիրառել: Դրամաշնորհառուին վճարվելիք Դրամաշնորհի գումարը կարող է կրճատվել տույժի չափով, կամ տույժի գումարը կարող է նվազեցվել Դրամաշնորհի հաջորդ վճարումից:

8.2. Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.3. Յուրաքանչյուր կողմ պատասխանատվություն է կրում իր մեղքով (կողմի գործողությունների կամ անգործության արդյունքում) մյուս կողմից երրորդ կողմին պատճառված վնասի համար:

Բաժին 9. Ֆորս մաժոր

9.1. Կողմերը ազատվում են Պայմանագրային պարտավորությունների նկատմամբ մասնակի կամ լրիվ չկատարելու համար պատասխանատվությունից, եթե այդպիսի անգործունակությունը պայմանավորված է ֆորս մաժորային հանգամանքներով, որոնք առաջացել են սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո, և որոնք Կողմերն ի վիճակի չեն եղել կանխատեսել կամ կանխել: Նման հանգամանքները ներառում են երկրաշարժեր, ջրհեղեղներ, հրդեհներ, պատերազմ, ռազմական պարետային ժամեր և պետական մարմինների գործողություններ և այլն:

Բաժին 10. Եզրափակիչ դրույթներ

10.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրության պահից և ուժի մեջ է մինչև Պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարումը:

10.2. Պայմանագրից բխող բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Այն դեպքում, երբ համաձայնություն ձեռք չի բերվել, վեճը լուծվում է ՀՀ դատական գործընթացներով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10.3. Կողմերը հաստատում են, որ Պայմանագիրը կնքելու պահին նրանք տեղյակ չեն որևէ պայմանի մասին, ըստ որի նրանք իրավասու չեն կամ չեն կարող կնքել կամ իրականացնել Պայմանագիրը:

10.4. Կողմերը հաստատում են, որ նրանք ծանոթացել են Ուղեցույցի պայմաններին և կանոնակարգերին: Սույն Պայմանագրում օգտագործված բոլոր սահմանումներն ունեն նույն իմաստը, ինչը սահմանված է Ուղեցույցում:

10.5. Կողմերը պարտավորվում են անհրաժեշտության դեպքում լիազորել և թույլատրել արտաքին աուդիտորին (նշանակված է ԾԻՎ- ի կողմից) և Համաշխարհային բանկի աշխատակիցներին՝ ստուգել

Ծրագիրը, դրա գործառնությունները և Դրամաշնորհին առնչվող ցանկացած գործառնություններ ու փաստաթղթեր:

10.6. Կողմերը գիտակցում են Պայմանագրում փոփոխություններ կատարելու հնարավորությունը, ներառյալ Հավելված 1-ը, այդ թվում՝ Ծրագրի բյուջեն: Կողմերը սույնով ընդունում են, որ Ծրագրի իրականացման ընթացքում Հավելված 1-ում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն կարող է առաջանալ: Պայմանագրի ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն գրավոր է և ստորագրված է Կողմերի կողմից:

10.7 Պայմանագրերի վավերապայմաններում տրված կողմերի էլեկտրոնային հասցեներով փոխանակված ծանուցումները և հաղորդագրությունները համարվում են վավեր ծանուցումներ:

10.8 Պայմանագիրը բաղկացած է ___ էջից, գրված՝ հայերեն և անգլերեն լեզուներով և ստորագրված երեք համարժեք օրինակներով՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

10.9 Պայմանագրի հայերեն և անգլերեն տարբերակների միջև որևէ հակասության առկայության դեպքում հայերենը պաշտոնականն է:

Բաժին 11. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ Ֆինանսների նախարարության Ծրագրերի «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամ իրականացման վարչություն

Դրամաշնորհառու

“ _____ ”

ՀՎՀՀ _____

Հասցե՝ _____

Էլ. հասցե՝ _____

Իրավաբանական անձի գրանցման համար: _____ / _____,

“ _____ ” ԲԸ

Հաշվեհամար _____

Տնօրեն _____

ս.տ
կ.տ.